

ԲԱՆԱՎԵՃ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅՆԻՆԻ ՎԵՐՁԱԾԱՆՑՆԵՐԻ ՀԱՄԱԺԱՄԱՆԱԿՅԱ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՅՈՐ

Ս. Ա. ԳԱՍՏՅԱՆ

Ժամանակակից հայերենի ածանցների դասակարգում այս կամ այն նըպատակով ու խորությամբ կատարվել է բոլոր այն լեզվաբանների կողմից, որոնք անդրադարձել են ածանցմանը, որպես հայերենի բառակազմության կարևորագույն եղանակներից մեկի, կամ առանձին խոսքի մասերի բառակազմության ուսումնասիրության խնդիրներին: Ամենաբազմակողմանի դասակարգումներից մեկը առկա է ՀՍՍՀ ԳԱ Լեզվի ինստիտուտի հրատարակած ակադեմիական քերականության առաջին հատորում¹:

Նշված աշխատության մեջ ածանցները դասակարգված են՝

ա. Ըստ գործառույթի՝ տարբերակելով բուն բառակազմական և խոսքի-մասակերտ-իմաստափոխական ենթախմբեր: Իրենց հերթին բուն բառակազմական ածանցները ենթաբաժանվում են տիպիկ իմաստափոխական և նվազափաղաքշական խմբերի: բ. Ըստ դիրքի՝ նախածանց (ժխտական և դրական ստորաբաժանումով), միջածանց, վերջածանց: գ. Ըստ իմաստի և ձևի փոխհարաբերության (բազմիմաստ, մենիմաստ, հոմանիշ, համանուն, նույնանիշ, համանիշ, հականիշ): դ. Ըստ գործածության հանախականության (կենսունակ և անկենսունակ, վերջինս՝ գիտակցվող և քարացած ենթախմբերով): ե. Ըստ կազմության (պարզ, բաղադրյալ): զ. Ըստ խոսքի մասեր կերտելու նշանակության (մեկ խոսքի մաս կերտող, մի քանի խոսքի մաս կերտող՝ առաջին ենթախմբում առանձնացնելով ուրիշ խոսքի մասից տվյալ խոսքի մասը կերտող և խոսքի մասային փոխանցում չկատարող ածանցներ): Ղատվում է նաև փոխառյալ ածանցների խումբը:

Այս դասակարգման մանրամասն քննությունը մեր նպատակներից շատ հեռու է, սակայն չենք կարող չնշել, որ այսպիսի համահավաք տարաբնույթ ենթախմբերի դասդասման սկզբունքները և հիմունքները հաճախ խիստ տարբեր են, երբեմն էլ կրկնվող: Այսպես, օրինակ, դասակարգման զ՝ ըստ խոսքի մասեր կերտելու նշանակության» անվանված հիմունքի առաջին ենթախումբը ա-ի ըստ գործառույթի կատարված խմբավորման կրկնությունն է, որը, չգիտես ինչու, առանձնացվում է որպես առանձին սկզբունք մեկ անգամ ևս:

Ակնհայտ է, որ վերոբերյալ դասակարգման մեջ միաժամանակ նկատի են ունեցվել և՛ համաժամանակյա, և՛ տարաժամանակյա մոտեցումները (պարզ և բաղադրյալ ածանցներ, քարացած ածանցներ և այլն), իսկ առանձին դեպքերում էլ մեկ սկզբունքով կատարված ենթախմբի տակ հանկարծ հայտնվում են բոլորովին այլ հիմունքով առանձնացվող բաժանումներ: Օրի-

¹ Վ. Գ. Առաքելյան, Ս. Ա. Խաչատրյան, Ս. Ա. Էլոյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 1: Հնչյունաբանություն և բառագիտություն, Երևան, 1979 (բաժնի հեղինակ Ս. Ա. Էլոյան):

նակ, ըստ դիրքի բաժնում նախաժանցները, հետևելով ավանդույթին, ստորաբաժանվում են դրական և ժխտական խմբերի, որը ընդհանուր իմաստային սկզբունք է, իսկ ըստ իմաստի բաժնում այդպիսի խմբավորում չկա:

Լեզվական փաստերի համաժամանակյա ուսումնասիրության դեպքում հիշյալ դասակարգումների մի մասը դառնում է ոչ էական: Օրինակ, ժամանակակից հայերենի ածանցական կառույցները համաժամանակյա տեսանկյունից ուսումնասիրողի համար ըստ էության որևէ նշանակություն չունի այն հանգամանքը, որ -վածք, -անակ, -անք և -ություն ածանցները ըստ ծագման բաղադրյալ են և ոչ պարզ: Այս դեպքում էականը նրանց արտահայտած ընդհանուր բառակազմական նշանակությունն է, և զուտ ձևույթաբանական ուսումնասիրությունների ժամանակ դրանք կարող են, հիմք ընդունելով ընդհանրական նոր իմաստը, մեկ ձևույթ համարվել նույնիսկ այն դեպքում, երբ բաղադրիչ ածանցները առանձին-առանձին ժամանակակից հայերենում գործուն են (վածք = վ-ած-ք, ություն = ութ-յուն և այլն):

Ածանցական բաղադրությունների համաժամանակյա քննությունը առաջադրում է ածանցների դասդասման մի քանի նոր սկզբունքներ, որոնցից կարևորները հետևյալներն են:

ա. Ածանցների դասակարգում ըստ ածանցական կաղապարների:

Նկատի ունենալով, որ ժամանակակից հայերենում ածանցավոր բառերը կազմվում են գոյականական (Գ), ածականական (Ա), բայական (Բ) և մակբայական (Մ) բառակազմական («ածանցող») հիմքերից երեք կարգի ածանցներով՝ գոյականական (α_1), ածականական (α_2) և մակբայական (α_3), ժամանակակից հայերենի հնարավոր ածանցական կաղապարների ընդհանուր թիվը² դառնում է 12: Եթե մի կողմ թողնենք բոլոր կաղապարների թեև գիտակցվող, բայց ոչ գործուն ածանցները, կստանանք ժամանակակից հայերենի վերջաձանցների ըստ կաղապարների բաշխման հետևյալ պատկերը (տե՛ս էջ 77-ի աղյուսակը):

Բերված աղյուսակի յուրաքանչյուր քառակուսում, որոնց թիվը, կաղապարների քանակին համապատասխան, տասներկուս է, դրված են մեկ ածանցական կաղապարում հանդես եկող գործուն ածանցները: Այսպես, օրինակ, գոյականից գոյական կազմող՝ Գ α_1 կաղապարի ածանցները խմբավորված են առաջին քառակուսում, գոյականից մակբայ կազմողները (Գ α_3)՝ երրորդ, բայարմատից ածական կազմողները (Բ α_2)՝ հինգերորդ և այլն:

Ածանցական հիշյալ 12 կաղապարներից ժամանակակից հայերենում որպես գործուն իրացվում է 8-ը (Գ α_1 , Գ α_2 , Գ α_3 , Բ α_1 , Բ α_2 , Ա α_1 , Ա α_2 , Ա α_3), որոնցից առավել գործուն են երկուսը՝ Գ α_1 և Բ α_1 , այնուհետև՝ Գ α_2 , Ա α_2 , Ա α_1 , Բ α_2 , համեմատաբար քիչ՝ Ա α_3 , Գ α_3 :

Բ α_3 կաղապարով առհասարակ բառ չի կազմվում: Մ α_1 կաղապարով -ություն ածանցը կարող է գոյական կազմել միայն ածական-մակբայներից (լավություն, մտերմություն), Մ α_2 կաղապարով -ական ածանցով գրաբարյան շրջանից եկած կազմություններ են մշտական, իսկական, կամայական, հանախական բառերը: Մ α_3 կաղապարի մեկ-երկու հնագույն ածանցական բաղադրություններում հանդես են գալիս -ակի (հաճախակի) և -ապես (հարապես, նախապես, մշտապես, հաճախապես) ածանցները, ըստ որում, պատմական մոտեցման դեպքում անպայման պետք է նկատի ունենալ, որ գրա-

² Ածանցական կաղապարների քանակի և դրանց մեջ թվականի ու դերանվան յուրահատուկ կաղապարների բացակայության մասին տե՛ս Ս. Ա. Գալստյան, Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Երևան, 1978, էջ 18—48:

ՃԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐՆԵՒ ԳՈՐԾՈՒՆ ՎԵՐՋԱՅԱՆՑՆԵՐԻ ԲԱՇԵՈՒՄԸ ԸՍՏ
 ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ԿԱՂԱՊԱՐՆԵՐԻ

	ա ₁	ա ₂	ա ₃
Գ	1. Գա ₁ : ա/բան, ա/գործ, ահ, ա/նոց, անք, ա/լան, ա/տան, արան, արար, ացի/նցի/ցի, ացու, եղն, նի, երն, արն, ի, իկ, լակ, որդ, ոց, ություն, ուկ, ուհի, ութ, ունի, ունք, ուտ, ք:	2. Գա ₂ : ա/գին, ազան, ախն, ազետ, ա/վոր, ատ, արար, ացի/ցի, ացու, ե, եղ, եղն, ե-րն/արն, ի, լա, լան, ոտ, ուտ:	3. Գա ₃ : ա/բար, ապես, ազարի, ովն, երն, որն:
Ք	4. Քա ₁ : ած, ած/ո, ազ, ան, ա/նոց, անք, արան, արար, եք, իկ, իլ, իք, կան, մունք, յուն, ող, թն, ովի, որդ, ոց, ոցի, ված, վածք, ություն, ուկ, ում, ունք, ութ, ուրդ, ուք, ք:	5. Քա ₂ : ա/գին, ազան, ան, ազոր, արար, ե-ղն, ի, իկ, իլ, իք, կան, կոտ, ման, ած/ո, ող, ոտ, ու, ուկ, ուն, ունի, ուտ:	6. Քա ₃ -----
Ա	7. Աա ₁ : ազ, արար, ություն, ուհի, ութ, ոտ, ք:	8. Աա ₂ : ա/գին, ա/գույն, ազ, ազան, ազի, ա-նոց, ազետ, ազոր, ազուն, արար, բորդ/բորդ, ի, իկ, լա, ու, որդ, ուկ:	9. Աա ₃ : արար, ազի, ապես, ո-վն, որն:
Մ	10. Մա ₁ : (-ություն՝ ածական-մակերայ հիմքերի հետ):	11. Մա ₂ : (ազան):	12. Մա ₃ : (ազի, ապես):

բարում հաճախ-ը նաև գոյական ու ածական էր, իսկ նախ-ը և հառ-ը՝ և՛ մակբայ, և՛ ածական:

բ. Ածանցների դասադասման երկրորդ սկզբունքը, որի հնարավորությունը տալիս է բերված աղյուսակը, ածանցների դասակարգումն է ըստ բաղադրական հիմքերի խոսքի մասային պատկանելության: Աղյուսակի հորիզոնական առաջին շարքում (կաղապարներ 1-ին, 2-րդ, 3-րդ) գոյականական հիմքերից վերջաժանցավոր բառեր բաղադրող (համապատասխանաբար՝ գոյական, ածական և մակբայ) ածանցներն են, երկրորդ շարքում (կաղապարներ 4-րդ և 5-րդ)՝ բայարմատից գոյական և ածական բաղադրողները, երրորդում (կաղապարներ 7-րդ, 8-րդ և 9-րդ)՝ ածականական հիմքերով ածանցավոր բառեր կազմողները, իսկ չորրորդում (կաղապարներ 10-րդ, 11-րդ և 12-րդ)՝ մակբայական:

գ. Ածանցների դասակարգում ըստ տարբեր խոսքի մասային բառակազմական հիմքերի հետ ածանցների կապակցելիության: Աղյուսակի տվյալներով, ածանցների համանունության ու բազմիմաստության այն ըմբռնման դեպքում, ըստ որի բազմիմաստ են համարվում «մի քանի խոսքի մաս կերտող» ածանցները, և ածանցների բազմիմաստությունը չի որոշվում ըստ բառակազմական նշանակությունների նույն խոսքի մասի սահմաններում, կապակցելիության հատկանիշով ածանցները բաժանվում են այսպիսի խմբերի:

1. Բոլոր շորս խոսքի մասային բառակազմական հիմքերի հետ (Գ, Ա, Բ, Մ) կապակցվում են -ական (ընկերական, սովորական, փոխադրական, մշտական) և -ություն (ընկերություն, սովորություն, փոխադրություն, վատություն) ածանցները, եթե նկատի ենք ունենում ածական-մակբայների երկակի խոսքի մասային բնույթը:

2. Երեք խոսքի մասային բառակազմական հիմքերի հետ կապակցվող ածանցներ. Գ, Ա, Բ՝ -ազին (ահազին, թանկազին, ցնծազին), -ակ (տնակ, կապուտակ, դիտակ), -անոց (հարդանոց, բազմահատորանոց, հնգանոց, դիտանոց), -ավոր (թրթուրավոր, պակասավոր, ճգնավոր), -աբար (գյուտարար, կեղծարար, որը երկնախատիպ է և կարող է մեկնաբանվել նաև որպես կեղծիք գոյականից առաջացած, փրկարար), -ի (ծիրանի, տմարդի, կատաղի), -իկ (մայրիկ, փոքրիկ, շրջիկ), -ոտ (բրդոտ, նախանձոտ, վարանոտ), -որդ (դահուկորդ, առաջնորդ, հավակնորդ), -ուկ (գառնուկ, խղճուկ, կտրուկ), -ույթ (բառույթ, լայնույթ, հասույթ), -ուտ (ծառուտ, թավուտ, կիզանուտ), -ք (բարիք, հավք, ելք). Գ, Ա, Մ՝ -ապես (նյութապես, մեծապես, նախապես):

3. Երկու խոսքի մասային բառակազմական հիմքերի հետ կապակցվող ածանցներ. Գ, Ա՝ -աբար (ընկերաբար, մտերմաբար), -ովին (խմբովին, լիովին), -որեն (ասպետորեն, շոայլորեն), -ունի (ընկերուհի, մտերմուհի), -յա (մետաղյա, բյուրեղյա). Գ, Բ՝ -աբան (երգարան, ընթերցարան), -ոց (մատնոց, խարտոց), -ունի (Հայրունի, պահունի), -ունք (ծաղկունք, արբունք), Ա, Մ՝ -ակի (բազմակի, հաճախակի՝ մակբայական հիմքերի խիստ սահմանափակ թվով):

4. Միայն մեկ խոսքի մասի բառակազմական հիմքերի հետ են կապակցվում հետևյալ ածանցները. գոյականական՝ -աբան (լեզվաբան), -ագործ (կարբիդագործ), -ային (տնային), -անք (վարդանանք), -ապան (նախարպան), -աստան (ծառաստան), -ավաբի (ընկերավաբի), -ավետ (բուրումնավետ), -ատ (կոնատ), -ացի/նցի/ցի (հորենացի, մշեցի, դափանցի), -ացի/ցի (մտացի), -ացու (հարսնացու), -ե (փայտե), -եղ (մարմնեղ), -եղեն (մրսեղեն), -ենի (հայրենի), -երեն/արեն (ռուսերեն, հունարեն), -յակ (ամուսնյակ), -յան (ուրալյան). ածականական՝ -ագույն (լավագույն), -ավուն (կարմր-

բավուն), -բորդ/բերդ (բրորդ, վեցերորդ). բայական՝ -ած (հատած), -ածն (բրածո), -ածու (ժողովածու), -ան (կծան), -անք (աշխատանք), -իչ (բրիչ), -իք (կեղծիք), -կան (մրսկան), -կոտ (ամաչկոտ), -ման (վաման), -մունք (զբաղմունք), -յուն (շաշյուն), -ող (հղող), -ոն (ջարդոն), -ովի (զցովի), -ված (լկսված), -վածք (պատմվածք), -ու (կծու), -ում (հրում), -ուն (սահուն), -որդ (պակասորդ), -ուց (սերուց), -ուք (քերուք):

Այլ է ածանցների կապակցելիության պատկերը, երբ հարցը քննում ենք նույն խոսքի մասի սահմաններում, այսինքն՝ ելնելով այն սկզբունքից, որ տարբեր հարացուցային շարքեր կազմող ածանցները ըստ էության տարբեր, ըստ կիրառության համանուն ածանցներ են: Այս դեպքում ստանում ենք ածանցների ըստ հիմքերի գործառական բաշխման հետևյալ պատկերը:

Գոյականակերտ ածանցներ: Չորս խոսքիմասային (Գ, Ա, Բ, Մ) բառակազմական հիմքերի հետ կապակցվում է -ությունը, ածական-մակբայական հիմքերի հետ վերևում արված վերապահության (մայրություն, դեղնություն, ցնծություն, արագություն): Երեքի հետ են կապակցվում՝ Գ, Ա, Բ՝ -ակ (տրնակ, անուշակ, շշակ), -աբար (ներկարար, փրկարար, որոնք ըստ կիրառության նաև ածականներ են, և առողջարար, որը միայն ածական է), -ույթ (բառույթ, լայնույթ, թեքույթ), -ունք (շրթունք, մանրունք, արբունք), -ի (գիրք, ընտանիք, բերք): Երկուի հետ են կապակցվում՝ Գ, Ա՝ -ունի (Արշակունի, սրբունի), -եղեն (ոսկեղեն, կանաչեղեն), -ուտ (կաղնուտ, կանաչուտ), Գ, Բ՝ -անոց (հարդանոց, աշխատանոց), -աբան (բառարան, մարզարան), -իկ (բաղիկ, ֆոռիկ), -որդ (դահուկորդ, սահորդ), -ոց (մատնոց, սրոց), -ուկ (ձագուկ, հեղուկ), -ունք (լորձունք, արբունք):

Միայն գոյականական հիմքերի հետ են կապակցվում՝ -աբան (գրաբան), -ագործ (քիմիագործ), -անք (աներանք, ժող.), -ապան (սայլապան), -աստան (բուրաստան), -ացի/եցի/ցի (քաղաքացի, վանեցի, երևանցի), -ացու (մսացու), -ենի (տանձենի), -երեն/արեն (հայերեն, շինարեն), -ի (ծիրանի), -յակ (ամյակ), -ունի (խնկունի, բւբ.) ածանցները: Միայն բայական հիմքերի հետ են կապակցվում՝ -ած (կոտորած), -ածո (պահածո), -ածու (ժողովածու), -ան (կախան), -անք (աշխատանք), -եք (արժեք), -իչ (գրիչ), -իք (ընթրիք), -կան (թխական), -մունք (զգացմունք), -յուն (մայուն), -ող (գրող), -ոցի (բունցի), -ված (հարված), -վածք (բերվածք), -ում (շփում), -ուրդ (հավելուրդ), -ուք (սրտմաշուք) ածանցները: Միայն ածականական հիմքերից գոյական կազմող ածանց չկա:

Ածականակերտ ածանցներ: Չորս խոսքիմասային (Գ, Ա, Բ, Մ) բառակազմական հիմքերի հետ կապակցվում է -ական ածանցը (ընկերական, մրտերմական, սխալական, մշտական)՝ մակբայական հիմքերի հետ հզվդ. գործառություն: Երեքի հետ կապակցվում են (Գ, Ա, Բ) -ագին (տոթագին, զբվարթագին, սպառնագին), -ավոր (շորավոր, սևավոր, անցվոր), -աբար (սընընդարար, հաշտարար, համոզարար), -ի (աղի, միադիմի, պատրաստի), -ոտ (կավճոտ, մոլեգնոտ, վարանոտ) ածանցները: Երկուի հետ են կապակցվում՝ Գ, Ա՝ -ավետ (բլրավետ, հարմարավետ), -յա (երկաթյա, թխաշյա). Գ, Բ՝ -ուտ (տղմուտ, ծարավուտ). Ա, Բ՝ -իկ (մեղմիկ, շրջիկ), -ուկ (տաքուկ, կտրուկ):

Միայն գոյականական հիմքերի հետ են կապակցվում՝ -ային (շրջանային), -ատ (պոչատ), -ացի/ցի (բերանացի), -ացու (մսացու), -ե (երկաթե), -եղ (մսեղ), -յան (հայկյան), միայն ածականական՝ -ագույն (լավագույն), -ակ (անուշակ), -ակի (լայնակի), -անոց (էծանանոց), -ավուն (երկարավուն), -որդ (ձախորդ), թվական-ածականների հետ՝ -ելորդ (երկրորդ, հինգերորդ) ածանցները: Միայն բայական հիմքերի հետ են կապակցվում՝ -ան

(կծան), -իչ (դյութիչ), -իֆ (կառուցվելիք), -կան (մրսկան), -կոտ (զայրացկոտ), -ման (ելման), -ած/ո (հյուսվածո), -ող (տաշող), -ու (հատու), -ուն (շրջուն), -ունի (բերունի) ածանցները:

Մակբայակերտ ածանցներ: Չորս խոսքիմասային հիմքերի հետ կապակցվող ածանց չկա: Երեքի հետ է կապակցվում (Գ, Ա, Մ) -ապես ածանցը (նյութապես, ժամանակավորապես, մշտապես): Երկու խոսքիմասային հիմքերի հետ կապակցվում են՝ Գ, Ա՝ -աբար (մայրաբար, շքեղաբար), -ովին (զլխովին, կիսովին), -որեն (ճակատագրորեն, նենգորեն), Ա, Մ՝ -ակի (հզվդ.) (որոշակի, հանկարծակի) ածանցները: Միայն մեկ խոսքիմասային հիմքի հետ կապակցվող ածանց չկա:

դ. Ածանցների դասակարգում ըստ նրանց իմաստափոխական (իմաստահավելյական) և գործառական-փոխանցական հատկանիշի³:

Ածանցական կաղապարների աղյուսակում ձախից աջ, վերևից ներքև՝ անկյունագծով (կաղապարներ 1-ին, 8-րդ, 12-րդ) դրված են իմաստափոխական (գոյականից գոյական, ածականից ածական և մակբայից մակբայ կազմող) ածանցները, մնացած քառակուսիներում (կաղապարներում)՝ գործառական-փոխանցական:

ե. Ժամանակակից հայերենի գործուն վերջածանցների բաշխման աղյուսակում կատարված է նաև ածանցների դասակարգում ըստ ածանցական բաղադրությունների խոսքիմասային պատկանելության, որը ածանցների դասակարգման հնագույն սկզբունքներից մեկն է: Այսպես, օրինակ, աղյուսակի առաջին ուղղաձիգ շարքում (1-ին, 4-րդ, 7-րդ և 10-րդ կաղապարներում) գործող ածանցները գոյականակերտ են, երկրորդինը (կաղապարներ 2-րդ, 5-րդ, 8-րդ և 11-րդ) կազմում են ածականներ, երրորդինը (կաղապարներ 3-րդ, 9-րդ և 12-րդ)՝ մակբայներ:

Նշված աղյուսակը յուրօրինակ միջոց է նաև հոմանիշ ածանցների գործառույթյան սահմանները որոշելու համար: Քանի որ հոմանիշ կարող են լինել միայն նույն խոսքի մասին պատկանող բաղադրությունները (տվյալ դեպքում՝ ածանցական), ապա նշանակում է, որ հոմանիշ ածանցները աղյուսակում պետք է բաշխվեն միայն ուղղաձիգ շարքերով, այսինքն՝ հոմանիշ կարող են լինել միայն 1-ին, 4-րդ, 7-րդ, 10-րդ, կամ՝ 2-րդ, 5-րդ, 8-րդ, 11-րդ, կամ՝ 3-րդ, 9-րդ, 12-րդ կաղապարների ածանցները նշված խմբերի շրջանակներում:

Այսպիսով, ածանցների դասակարգման ներկայացված համակարգում որոշիչ են դառնում այն կաղապարները, որոնցում դրանք հանդես են գալիս, բառակազմական հիմքերի խոսքիմասային պատկանելությունը, ածանցների և այդ հիմքերի կապակցելիության հնարավորությունները, ածանցների բառակազմական նշանակությունները (որոնք, բնականաբար համադրական տախտակում չէին կարող արտահայտվել) և որպես արդյունք ստացված բաղադրությունների խոսքիմասային պատկանելիությունը:

С. А. ГАЛСТЯН — Несколько вопросов синхронической классификации суффиксов современного армянского языка.— На основе привлеченных автором материалов в статье производится классификация суффиксов по словообразовательным моделям, частеречной принадлежности производящих основ и сочетаемости суффиксов с последними.

³ Տե՛ս Կ. Բ. Զահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974, էջ 168: